

Հայոց եկեղեցու պատմության մրցույթի

ՀԱՐՑԱՇԱՐ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ

1. Աստվածաշունչը: Հին և Նոր Կտակարաններ. Կազմություն:
2. Ո՞րն էր Աստծո և Նոյի միջև կնքված ուխտի երևելի նշանը, որ Աստված այլևս աշխարհը ջրհեղեղով չի կործանի:
3. Ի՞նչ անուններով է հայտնի Հայաստանն Աստվածաշնչում:
4. Աստված ու՞մ միջոցով և որտե՞ղ տվեց 10 պատվիրանները:
5. Երկնային փառաբանական ձայնով ովքե՞ր առաջինն իմացան Քրիստոսի ծննդյան լուրը:
6. Հիսուս Քրիստոսի 12 առաքյալները:
7. Ներկայացնել Հիսուս Քրիստոսի առակները:
8. Քանի՞ արժաթով մատնվեց Քրիստոս:
9. Հիսուս Քրիստոս: Մատնություն, խաչելություն, հարություն և համբարձում:
10. Հարությունից հետո Հիսուս քանի՞ օր մնաց երկրի վրա:

ԵԿԵՂԵՑԱԲԱՆԱԿԱՆ

11. Հայ Առաքելական եկեղեցու խորհուրդները:
12. Ինչպե՞ս են դիմում ամուսնացած և կուսակրոն քահանաներին:
13. Ի՞նչ է թեմը: Թվարկեք նվազագույնը հինգ թեմեր:
14. Հայ եկեղեցու քանի՞ նվիրապետական աստիճաններ կան: Թվել հերթականությամբ:
15. Նշեք Հայ եկեղեցու խորհուրդները:
16. Ի՞նչ է անհրաժեշտ հաղորդության խորհրդին մասնակցելու համար:
17. Ի՞նչ նյութով է կատարվում մկրտության խորհուրդը:
18. Ի՞նչ նյութով է կատարվում դրոշմի խորհուրդը:
19. Քանի՞ զգայարաններ ու մարմնի մասեր են դրոշմվում:
20. Եկեղեցու ո՞ր մասում է գտնվում մկրտության ավագանը:

ԾԻՍԱԿԱՆ

21. Քանի՞ տեսակ են Հայոց եկեղեցու տոները և ո՞րն է դրանց տարբերությունը:
22. Ո՞ր տոներն են կոչվում տերունական:
23. Քանի՞ տաղավար տոն ունի Հայոց եկեղեցին. Որո՞նք են:
24. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Սուրբ Ծնունդը:
25. Ու՞մ է նվիրված Ավետման տոնը:
26. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Ավետման տոնը:
27. Ե՞րբ է կատարվում ջրօրհների արարողությունը:
28. Հայոց եկեղեցին երբ է նշում Տյառնընդառաջը և ինչ անունով է հայտնի ժողովրդի մեջ:

29. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Ծաղկագարդը:
30. Ինչպե՞ս է տոնվում Ծաղկագարդը:
31. Ներկյացրե՞ք Սուրբ Հարության տոնի իմաստը:
32. Ինչպե՞ս են մարդիկ ողջունում իրար Սուրբ Հարության տոնի օրը:
33. Ինչպե՞ս է կոչվում Ծաղկագարդին հաջորդող շաբաթը:
34. Որտեղի՞ց համբարձվեց Հիսուս Քրիստոսը:
35. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Համբարձման տոնը:
36. Ի՞նչ է կատարվում Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնի օրը:
37. ՈՒ՞մ է նվիրված Խաղողօրհների տոնը:
38. Հայոց ո՞ր կաթողիկոսն է Սուրբ Սարգսի տոնը հռչակել երիտասարդների օրհնության օր:
39. Ե՞րբ է տոնվում սրբոց Վարդանանց տոնը:
40. ՈՒ՞մ է նվիրված Սրբոց թարգմանչաց տոնը և երբ է նշվում:

ՊԱՏՄԱԿԱՆ

41. Ովքե՞ր են տարածել քրիստոնեությունը Հայաստանում:
42. Ո՞վ էր Հայոց առաջին կաթողիկոսը:
43. Ովքե՞ր էին Հռիփսիմյան կույսերը:
44. Ե՞րբ է կառուցվել Մայր Տաճարը:
45. Ո՞վ հաջորդեց Ս. Գրիգոր Լուսավորչին:
46. Ե՞րբ, որտե՞ղ և ու՞մ կողմից է գումարվել Հայոց առաջին ազգային եկեղեցական ժողովը:
47. Հայոց եկեղեցին քանի՞ տիեզերական ժողովներ է ընդունում. Նշել թվականները և վայրերը:
48. 9-րդ դարում կաթողիկոսներից ո՞վ մեկ օրում ստացավ հոգևոր բոլոր աստիճանները:
49. Ի՞նչ գիտեք Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի մասին:
50. Հայոց ո՞ր մայրաքաղաքն էր հայտնի “Հազար ու մի եկեղեցիների քաղաք” անունով:
51. Ինչու՞ է Պետրոս կաթողիկոսը հայտնի “Գետադարձ” մականունով:
52. Ե՞րբ է հիմնադրվել Գևորգյան հոգևոր ճեմարանը, ու՞մ կողմից:
53. Նկարագրե՞ք “Երկաթե շերեփի” պատմությունը:
54. Ինչու՞ էր Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան 1915թ. դեկտեմբերի 1-ի իր հեռագրում նշել, որ “Հայ հոգևորականությունը պետք է ոչնչացվի առաջին հերթին”:
55. Հայոց ո՞ր կաթողիկոսին են խեղդամահ արել իր աշխատասենյակում:
56. Ո՞վ է այսօր Հայոց կաթողիկոսը և թվով որերորդն է:
57. Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը և Հայկական Հարցի վերաբացումը
58. Հայոց մեծ եղեռնը և եկեղեցին
59. Եկեղեցու գործունեությունը 1918 - 1920 թթ.
60. 1918 թ. հերոսամարտերը և եկեղեցին

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ

61. Ո՞ր պատվիրաններն են համարվում քրիստոնեական բարոյախոսության հիմքը:

- 62. Որո՞նք են քրիստոնեական բարոյագիտության երեք հիմնական դրսևորումները:
- 63. Թվարկեք առաքինություններն ու մոլությունները:
- 64. Ողորմության քանի՞ տեսակ է առանձնացնում Ս. Գրիգոր Տաթևացին: Որո՞նք են:
- 65. Ո՞րն է Ոսկե կանոնը:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

- 66. Ինչպե՞ս են ձևավորվում արժեքները:
- 67. Ինչպի՞ն են հայերը հավատքով և ինչպիսիսն՝ դավանանքով:
- 68. Հայոց եկեղեցու արժեքային համակարգի մեջ ո՞ր կարևորագույն հատկանիշներն են ներառված և ովքե՞ր են դրանց խորհրդանիշ սրբերը:
- 69. Ինչպե՞ս է բնութագրում Աստծուն Ագաթանգեղոսը իր “Հայոց պատմություն” աշխատասիրության մեջ:
- 70. Ի՞նչ ենթաբաժիններ ունի սրբախոսությունը, որն է դրանց տարբերությունը:
- 71. Ո՞րն է Քրիստոնեության խորհրդանիշը:
- 72. Խաչքարի ո՞ր տեսակն է կոչվում “Ամենափրկիչ”:
- 73. Ինչպե՞ս են կոչվում խաչքարեր կերտող քանդակագործ-վարպետները:
- 74. Ինչպե՞ս են կոչվում եկեղեցական կանոնական երգերը:
- 75. Ընտանիք, Հայրենիք